ՀԵՍՈՒՐԱՆԱԿԱՆՆԵՐ

ՀԱԿՈԲ ՊԵՏՐՈՍՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ՍԱՍՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սասուն Վարդանյանը ժամանակակից հայ արձակի շնորհալի դեմքերից է՝ չնայած նրա անունը այսօր գրական շրջանակներին քաջածանոթ չէ: Առաջին գիրքը՝ «Մատյան փրկության», լույս է տեսել 1978 թվականին եւ այնուհետեւ, հրատարակել է մի պատկառելի գրականություն՝ պատմվածքներ, պատկերներ, հեքիաթներ, վիպակներ, վեպեր, մոտ 5000 էջ: Նկատառման է արժանի նաեւ այն փաստը, որ անցյալ դարի 80-90-ականներին այդ երկերի տպաքանակները 10.000-ից 2000 էին եւ գրաշուկայում անմիջապես սպառվում էին: Եթե գրականասեր ընթերցողները իրենց գործուն վերաբերմունքը դրսեւորում էին Սասունի գրքերի տպաքանակները սպառելով, ապա գրական քննադատությունը աներերելիորեն հապաղում էր: Իհարկե, քննադատությունը չէ, որ գրականություն է ստեղծում, բայց նրա դերը կարեւոր է գրական անդաստանը կանոնավորելու, տաղանդներին հայտնաբերելու եւ փայփայելու, տեղնուտեղը մերժելու խոտանը:

Հայոց հողը շնորհալիների պակաս երբեք չի ունեցել եւ չունի, ինչ դժնի ժամանակներ էլ լինեն: Ժողովրդի բեղմնավոր ծոցից գալիս են նորերը ու կենսատու ավիշով մշտապես կենդանի պահում ազգային մշակույթն ու գրականությունը. նրանք ուշ-ուշ են գալիս, բայց երբեք չեն պակասում: Տաղանդները ծնծղա-շեփորների կարիքը չունեն, սակայն պատշաճ ուշադրությունն ու գուրգուրանքը օդ ու ջրի պես անհրաժեշտ են: Եթե խոսքը մասնավորենք Ս. Վարդանյանի շուրջ, ապա պետք է ասել, որ նա մոտ չորս տասնամյակ ստեղծագործելով եւ մեկ տասնյակից ավելի գրքերի հեղինակ լինելով՝ գրաքննադատության լուրջ գնահատանքին չի արժանացել: Չիգ տարիներ չի ծեծել խմբագրությունների դռները, մաս-մաս (առանձին գործերով) չի տրվել ընթերցողին, այլ տառապալից ու բեղմնավոր տքնանքով փորձել է նվաճել իր «կենսական տարածքը» նորօրյա գրականության մեջ, երբ արդեն կարելի էր ներկայանալ. կա՛մ ամբողջությամբ քեզ կընդունեն, կա՛մ շեմից ետ կդարձնեն: Խոստովանենք, որ հանդուգն քայլ էր, վիթխարի փորձություն սեփական անձի ու ճակատագրի հանդեպ: Բայց Սասունը համառորեն գնաց այդ քայլին՝ համարելով դա իսկական գրականություն մուտք գործելու արդար ուղի: Որքան դրամատիկ, նույնքան ազնիվ ճանապարհին նա ստիպվեց այն անպարփակ ու անկշռելի հաճույքով, որ բերում էին արարման վսեմ ու

տագնապալի պահերը՝ իմաստալից ու տանելի դարձնելով դառն ու անձուկ կեցությունը: Գրականությունը նեցուկ ու բալասան եղավ. նրա գրիչը չշարժեց նյութական բարիքներ ու ապրուստ հայթայթելու ակնկալությամբ մինչեւ այն պահը, երբ իր արժեքի լիիրավ գիտակցությունն ունեցավ:

Հայոց հին ու նոր մատյանների անխոնջ ընթերցումը, մայրենի գրականության ու պատմության, արվեստի ու կրոնի խորախորհուրդ գանձերին ու գաղտնիքներին հաղորդակցվելը, օրավուր թանձրացող կյանքի փորձը ուժ ու եռանդ են տվել, ամրապնդել են նրա հավատն իր կարելիությունների, ընտրած ճանապարհի անսխալության հանդեպ: Այս ամենի արդյունքում մեկ տասնյակից ավելի հրատարակված գրքերն էին եւ էլի անտիպ պատրաստի գործեր, որ կարող են հատորներ կազմել:

Ս. Վարդանյանը ծնվել է Հրազդանի շրջանի Սոլակ գյուղում, գեղջուկ Տիգրանի ընտանիքում 1942 թ. օգոստոսի 3-ին: Գյուղական 7-ամյակն ավարտելով՝ 1956-ին մեկնում է Երեւան եւ այստեղ ստանում միջնակարգ կրթություն: Դրանից հետո, 1964-1965 թթ. ընդունվել եւ բարձրագույն կրթություն ստացել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանում: Վեց տարի մնալով ճեմարանում՝ ուսումնասիրում ու արմատապես տիրապետում է հայոց գրականությանը, հայոց պատմությանն ու կրոնի պատմությանը, գրաբարին, երաժշտական արվեստի հիմունքներին: Ուշիմ եւ առաջադիմող սանը արժանանում է ճեմարանի հոգեւոր մեծերի (Վազգեն Ա-ի) ուշադրությանը: 1969-70-ական թվականներին դասախոսում է ճեմարանում: Նրան սպասում էր հոգեւոր սանդուղքով վեր բարձրանալու գայթակղիչ հեռանկարը. դրա համար կային առարկայական եւ ենթակայական բոլոր նախադրյալները: Սակայն նա արդեն կախարդվել էր գրականության առեղծվածային աշխարհով. գրելու փորձեր էր արել, եւ թույլ առկայծող մի երերուն լույս անդուլ դեպի իրեն էր ձգում: Մի կողմից՝ համեմատաբար ապահով ու կայուն, բայց ոչ խաղաղ կրոնական գործչի կյանք, որի համար Աստված չէր զլացել իր շնորհները, մյուս կողմից՝ գրական մշակի անորոշ կեցություն: Նա հրաժարվում է հոգեւոր խոստումնալից կոչումից, բայց մնում է նույն ոգեղեն, ռոմանտիկ անձը՝ բարքով ու գործելակերպով: Այնուհետեւ սկսվում են դեգերումները՝ չիտրշելով իր նկարագրին անհարիր ամեն կարգի աշխատանքից: Ճեմարանի առաջին կարգի ավարտական վկայականով ո՞վ էր նրան այն ժամանակ հարմար գործ տալու:

60-ականների զարթոնքի օրերին Սասունը անմնացորդ նետվում է ազգային շարժման հորձանուտը, եւ մի խումբ նվիրյալների անձնադիր ջանքերով ժողովուրդը ուրքի է կանգնում նշելու Հայոց մեծ եղեռնի 50-ամյակը. չտեսնված ու չլսված իրողություն խորհրդային պայմաններում: Այդ զարթոնքը մերօրյա անկախության ու ազատության նախապատրաստական նշանակալի փուլը դարձավ: Եւ, ինչպես կարելի էր սպասել, սկսվում են հալածանքներն ու հետապնդումները, որոնցից անմասն չի մնում Սասունը:

Մի փոքր միջոց (1974 թվականից) հանգրվանում է Մատենադարանում, ապա համեմատաբար երկար ժամանակով Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ամբիոններից մեկում: Հետագայում նա որպես տնօրեն պաշտոնավարում է Արարատյան թեմի Սեւանի Վազգենյան դպրանոցում՝ դասավանդելով նաեւ հայոց պատմություն, եւ Շիրակի հոգեւոր թեմում (1990-1995 թթ.)՝ ստանձնելով հոգեւոր ընծայարանի վերատեսուչի պաշտոնը: 1988 թ. վերջին մեկնել է Արցախի հանրապետություն Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք գյուղի

միջնակարգ դպրոցում դասավանդելու: 1999-ից աշխատել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարան-ընծայարանում՝ իբրեւ հասպատության տեսուչ-տնօրեն եւ հայոց լեզվի դասախոս, ապա վերադառնալով Հայաստան՝ շարունակել է աշխատանքը Արցախում:

Այսքանը, կարծեմ, ընդհանուր պատկերացում տալիս է Սասունի, իբրեւ անձի, քաղաքացու եւ անհատականության մասին: Սակայն նրա ներաշխարհը առավել լավ ու մոտիկից ճանաչելու համար հարկ է թերթել ստեղծագործությունները, ուր մեր ազգի հասարակական կեցության ելեւէջներին համաչափ՝ տրոփում է գրողի սիրտը, երեւակվում է նրա էությունը ամենանրբին անդրադարձումներով:

Ս. Վարդանյանի ստեղծագործությունների առաջին գիրքը, ինչպես ասվեց, «Մատյան փրկությանը», լույս է տեսել 1978 թ. Իտալիայում, որն ամփոփում է նույնանուն պատմական մի դրամա եւ չափածո քնարական պոեմ՝ երկուսն էլ նվիրված Ս. Գրիգոր Նարեկացուն, երկուսն էլ նարեկացիական աստվածամերձ իմաստությունների հենքի վրա մեր ազգի ճակատագրի խոհերով առլեցուն: Ափսոս, որ գիրքը զանգվածային ընթերցողին անծանոթ մնաց՝ այն օրերի բռնությունների հրամայականով:

Նրա վաղ շրջանի երկերի («Ակունքներ» 1989 թ., «Սկիզբ» 1991 թ., «Կախարդական մանկություն» 1993 թ.) հիմնական ատաղձը հայրենի բնաշխարհն է՝ հարազատ գյուղը, նրա կենցաղը, հոգսերն ու ուրախությունները, գյուղական մոտիկ անցյալի չգունազարդված, վավերական իրականությունը: Այստեղ առանձնահատուկն այն է, որ հեղինակը, գրելով դրանք 60-70-ականներին, տուրք չի տվել գրական իշխող մտայնությանը եւ կյանքը ներկայացրել է իր բնականոն հունի մեջ՝ իրերը կոչելով իրենց անուններով. Թերեւս այս է եղել պատճառներից մեկը, որ ժամանակին դրանք չեն հրատարակվել:

Պատկերվածը խորհրդահայ գյուղն է՝ բայց իր հազարամյա կացութաձեւով, նաեւ այն արհեստական «նորամուծում-ներմուծումներով», որ արտաքնապես բարեգեղ ու խոստումնալից լինելով՝ իրականում խաթարում, քայքայում էին ավանդականը, ազգայինը, բնականը, խեղում էին մարդկանց հոգիները, ստվարացնում նենգ ու նանիր կեղծավորների շարքերը, իրար դեմ հանում թշնամանալու պատճառ չունեցողներին եւ, ամենասարսափելին՝ կոտրում-խորտակում էին մարդկանց ճակատագրերը: Բարեբախտաբար, գեղջուկ մեծամասնությունը ներքնապես չհավատաց «նոր աստվածների» կարգ ու սարքին, ձեւափոխվելով-հարմարվելով հանդերձ, որը բարոյահոգեբանական լուրջ խաթարումների ենթարկեց նրա հազարամյա կերտվածքը, շարունակեց ապրել իր պապենական օրենքներով: Համատարած բռնության ու հարկադրանքի թանձր մթնոլորտում բարեշրջումների նույնիսկ փոքրիկ կայծ չնշմարելով՝ նա թերահավատ մնաց այդ «նորի» հանդեպ, որովհետեւ ի տես օրավուր այլանդակվող բարքերի ու երեսպաշտության եւ արյան հազարամյա կանչով, այլեւ զուտ մարդկայնորեն նա զգաց-հասկացավ, որ եղածն անբնական է ու միանգամայն անբանական:

Ահա այսպիսին է Սասունի գյուղացին՝ հողի մարդը, օժտված անպարփակ մարդասիրությամբ, զվարթախոհության անսպառ լիցքով, աշխատասեր ու բարի, դյուրահավատ ու ներողամիտ, նաեւ նախապաշարված, զրկված հավատից, բայց հավատացյալ: Կային նաեւ խորամանկ, բանսարկու, ավազակարարո, կծծի ու անբան, երեսպաշտ ու մոլորված, անմեղների արյունը ծծող ու նրանց դժբախտացնող դավադիր տիպեր, բախտախնդիրներ,

«նորի » կրողներ. այդպիսին էր իրականությունը: Այս պարագայում ուղեցույց է եղել զգաստ իրապաշտությունը, նույնիսկ այն ասփիճան, որ նախատիպերի ծածկանունները (ավելանուն) առաջին գրքում չի փոխել, թողել է նույնը՝ իբրեւ ժողովրդական դարավոր փորձով ու իմաստությամբ գտնված գյուղ-գանձեր:

Գյուղաշխարհը պատկերող գործերը գրողն անվանել է վիպակներ կամ պարզապես՝ գյուղական պատկերներ: Մանկության-պատանեկության հեքիաթ օրերի կարոտաբաղձ վերհուշը քնարական-խոհական երանգով է ողողում այդ պատումները եւ դրանք դարձնում հուզախառն ու տպավորիչ: Այնքան անմիջական, հավաստի ու վարպետորեն են պատկերված գյուղական միջավայրը, մարդկանց խոսքն ու զրույցը, գեղջկական աշխատանքն ու աշխատանքի գործիքները, կենցաղի իրերը, կենդանական ու բուսական աշխարհը, պատմական վայրերն ու հուշարձանները, տեղանքի մանրամասները, որ դրանք գեղարվեստական արժեքից բացի, ճանաչողական մեծ լիցքեր են պարունակում:

Հայկական գյուղի մասին մեր պատկերացումները սահմանափակվում էին դասական գրականության (պռոշյանական, թումանյանական, բակունցյան) շրջանակներով. մեր կողքին ու մեզ հետ գոյատեւող մի ամբողջ գյուղաշխարհ մնում էր պլանային առաջադրանքներ կատարող մի գորշ ու անդեմ զանգված՝ դասային թշնամաքով ու «լուսավոր ապագա» կառուցելու ցնորամիտ կարգախոսներով..., շինծու կուսակցականներով, որոնք մինչեւ վերջ էլ չունեցան իրենց վերագրվող դերի հստակ ըմբռնումը, ովքեր, Սեւակի խոսքերով՝ համայնական ծովից էին խոսում, բայց սեփական առուն էին հոսում՝ այս մեկ դասը քաջ յուրացնելով: Եւ ահա 70-ականներին հրապարակվում են Հրանտ Մաթեւոսյանի ու մյուս շնորհալի «գյուղագիրների» իրապատում երկերը, որ ցրում-փարատում են ժամանակակից գյուղի մասին խաթարված պատկերացումները, ասում են ողջ ճշմարտությունը՝ հաճախ հարկադրաբար դիմելով եզոպոսյան լեզվին: Վարդանյանի «գյուղագրությունն» էլ ուղղված էր այդ նպատակին՝ մեծ մասամբ հասցեագրված պատանի ընթերցողին:

Ս. Վարդանյանի գյուղական արձակը փարօղունակ է, բովանդակությամբ հարուստ, հումորի նշանակալի պարունակությամբ, ինքնատիպ պատկերներով, կենսական հարցադրումների բազմազանությամբ, տեղական նիստուկացի մանրամասների առատությամբ մի ամբողջ աշխարհ՝ մարդկությանը հուզող մտահոգություններով, որ խտացել է աշխարհագրական մի փոքրիկ տարածքի ու մի բուռ գեղջուկ երկրագործների կյանքի արտացոլման մեջ: Գրողը կարողացել է տալ պատկերվող միջավայրի, գեղջկական կենցաղի մանրամասներն ու բնապատկերները հարազատ գույներով: Դրան մեծապես նպաստել են տեղական սովորությունների, հավատալիքների, հատկապես ժողովրդական բանահյուսության ինքնատիպ նմուշների, կատակ-զավեշտների, լեզվական-բարբառային տարրերի քաջահմուտ իմացությունն ու ստեղծարար կիրառումը, որոնք յուրահատուկ համ ու հոտ են տալիս նրա գրվածքներին:

Ս. Վարդանյանի իրապաշտ «գյուղագրությունը» մեծ չափերով ներառում է առասպելականը: Կենդանի, իրական հերոսների կողքին հանդես են գալիս երեւակայական, հեքիաթային կերպարներ՝ շոշափելիորեն հողեղեն արարածների նման: Սրանք եթե մի կողմից գրողի երեւակայության ծնունդ են, մյուս կողմից՝ բերներերան ավանդված եւ գեղջուկի մտածելակերպի ու հոգեբանության մեջ դարերով արմատացած իրողություններ, որ մեր

կռապաշտ ժամանակը նույնիսկ չկարողացավ «քերել» -հանել: Ինչքան էլ մարդու ուղեղը ճանաչել ու բացատրել է աշխարհը, անիմանալին անհամեմատ անսահման է, եւ հասարակ մահկանացուն զգում է դա: Գյուղական կյանքի ու կենցաղի համայնապատկերը թերի ու աղճատ կլիներ, եթե անտեսվեր այս փաստը: Եւ ահա գեղջուկ գրքաց կնոջ նախահիմքով արծածվում է կախարդ Սնդեի կերպարը: Այդ կերպարը զարգացնելիս Ս. Վարդանյանը ստեղծել է այն ուժը, որ երկրի վրա ամենազոր է, ամենահաս: Հինգ հարյուր տարեկան է կախարդ Սնդեն. ամենագետ է, իմաստուն, կենսափորձով հարուստ, բնության, Աստծու ու մարդկանց գաղտնիքներին հաստ: Նա խրատցնում է բարին, արդարը, եւ գյուղացիները ամենահուսակտուր պահերին մեծ ակնկալիքով են գնում նրա դուռը ու փարատում իրենց ցավերը, որ հողեղեն «փրկիչների» ուժերից վեր է: Նա խորհրդանշում է նաեւ ազգային ոգու հարատեւությունը եւ հարյուրամյակների ժողովրդական ավանդույթների փոխանցելիությունը. բնորոշ է Մեսրոպյան այբուբենի առեղծվածի նրա մեկնաբանությունը: Դարզապես զարմացնում է իրականի ու երեւակայականի այդչափ հմուտ միաձուլման՝ գրողի կարողությունը: Սնդեին ու նրա շրջապատը վրձնելիս Վարդանյանը առաջին հերթին, անշուշտ, նկատի է ունեցել պատանի ընթերցողին՝ նրա ճանաչողությանն ու երեւակայությանը անսպառ նյութ հայթայթելով:

Մի կարեւոր հատկանիշ եւս. Վարդանյանի գյուղական պատկերները բառիս բուն իմաստով շաղախված են անպարագիծ, անաղարտ սիրով ու ակնածանքով հայրենի հողի, այն պտղաբերող մշակ-երկրագործի հանդեպ, քրտնաթոր աշխատանքով երկիրը շեն պահող ու ազգային դիմագիծը սերնդեսերունդ փոխանցող, հարատեւությունը ապահովող զորության հանդեպ: Ու չնայած հասարակական-քաղաքական բազմաբղեկտ չարիքներին, բռնության խարազանի տակ հաճախակի կքվելուն, երկրից ու ազատությունից զրկվելուն՝ անկոտրում է մնացել այդ ոգին, ստեղծել ու կառուցել է իր երկիրը, բարիք ու բարություն է սերմանել, ապացուցել է ապրելու իր հաստատակամությունը, հայադավ ու երերուն այս աշխարհում մարդավարի ու հպարտ գոյատեւելու իր իրավունքը: Նույնիսկ գյուղական կյանքի տգեղ կողմերի բացահայտումներում՝ ի տես բնության գավակների մեջ վատի ու նսեմի դրսեւորումների, նրա ակնածանք-սերը չի խամրում: Լավատեսությունն ու բարությունը գրողի աշխարհընկալման անկապտելի բաղադրիչներն են:

Գրողի հեքաքրքրության շրջանակները շատ ավելի լայն են ու տարողունակ. վկա «Իմ թաղը, փողոցը եւ բակը» եւ «Մղձավանջային արձակուրդ» վիպակները, որ զետեղված են «Սկիզբ» գրքում:

«Իմ թաղը...» մի պատում է ժամանակակից մեծ քաղաքի արվարձաններից մեկի կյանքի ու կենցաղի մասին՝ կենսախինդ հումորով ներթափանցված, բայց տխուր մտորումների ու ընդհանրացումների տեղիք տվող: Թաղի անցուդարձը պատկերված է առանց զունազարդման, կենցաղային հազար ու մի հոգսերով, առօրյա գոյություններն ապահովելու ջղաձգումներով, մանր կրքերով եւ հուսախաբություններով, բամբասանք-չարախոսություններով, բռնցկակռիվ-տուրուդմփոցներով: Գրոտեսկի հասնող կոմիկական իրավիճակներով ու կերպարներով լեցուն այդ վիպակում հեղինակի առողջ զվարթախոհության տակ տառապանք ու թախիծ կա մարդկային խեղված ճակատագրի, նվաստացումների ու մանրախնդրության համար՝ հանուն մի պատառ հացի, ապահով երեւալու, դիմացինից եր չմնալու մրցապայ-

քարում: Աշխույժ ծիծաղով քայլ առ քայլ քողազերծվում է թաղի ճղճիմ առօրյան՝ թմբկահարված հասուն սոցիալիզմի պայմաններում: Ընդհանրապես, անկախ հասարակարգին բնորոշ արատներից, դիտարկված են մարդուն, մարդկային բնույթին, նրա վարքագծին ու հոգեբանությանը յուրահատուկ թերություններ, արատավոր դրսեւորումներ: Իհարկե, բարի հոգիները եւ ողջամիտները անպակաս են, բայց նրանք եւս ճզմված են հանապազօրյա ծով հոգսերի ու պակասությունների բեռան տակ, եւ լույս չկա: Դրախտ հորջորջվող իրականության մեջ պակասում են համընդհանուր շահերի գիտակցումը, մեծ նպատակները, հասարակական վսեմ նկրտումները. գորշ ու գեղնատարած մի կեցություն՝ այս է իրողությունը, այս է ճշմարտությունը:

«Մղձավանջային արձակուրդ» վիպակում գրողին մտահոգում են կենսական բոլորովին այլ խնդիրներ: Դրանք գրականությանն ու արվեստին հավերժորեն ուղեկցող՝ մարդու բուն կոչման, անհատի ու հասարակության փոխհարաբերության, կեցության ու բարոյականության, իրականության ու իդեալի, բարու եւ չարի, վսեմի ու տգեղի փոխառնչության խնդիրներն են: Սյուժեն շատ պարզ է: Նկարիչ Արամը քաղաքի շոգից պատսպարվելու նպատակով մեկնում է Սեւան, վրան խփում եւ ապրում մենակյացի կյանքով: Նրան այցելում են ընկերները, անծանոթ «հյուրեր»: Հաճախ մնալով մենակ՝ նա ժամանակ է ունենում խորհելու իր անցած օրերի, ներկա դրության մասին. կյանքում իր տեղի ու կոչման, մարդկային հարաբերությունների, ազգի ու հայրենիքի, բարեկամության ու ընկերության, գոյության իմաստի մասին, տրվում է սիրո երազանքներին, ապրում է այդ սիրով. գոհ է իր՝ Ռոբինզոնի վիճակից. զմայլված է Սեւանի չքնաղ առավոտներով ու նույնքան հմայիչ արեւապտքով: Թվում է, թե այդ հովվերգական կացությանը ոչինչ չի սպառնում, տագնապալի ոչինչ չկա: Բայց անսպասելիորեն տեղի է ունենում ողբերգություն. այդ բարի, խորհող, իր եւ ուրիշների համար տառապող նրբազգաց երիտասարդը դառնում է մարդասպան:

Հեղինակը փորձում է խորամուխ լինել այդ հակասականության, նրա պատճառների ու հետեւանքների մեջ, չափակշռել վեհության ու գեղնատարած սրտորության գոյությունը, լկտիության արմատները, փնտրում Ասծո կողմից մարդուն տրված փոքրիկ, կարճատեւ կյանքի իմաստը:

Հրաշալի է գծված մարդ-գազանը՝ նեղճակատ մտմտուքներով: Բախումն ավարտվում է բարու հաղթանակով. հոգեւոր մղձավանջը, որ ապրում է հերոսը, փարատվում է, բայց խորհել է տալիս մղձավանջի հարատեւության մասին, որովհետեւ չարը իշխող է, ամենազոր, ամենահաղթ: Քաղքենիական մտածելակերպը, չարչիական հոգեբանությունը անընդհատ վերարտադրում են մղձավանջ ու բարի հոգիների համար կյանքը դարձնում անտանելի: Ափի ու ծովի գեղեցկությունը չէ, որ գրավում է նրանց, այլ այդ գեղեցկությունը յուրովի վայելելու, ավելի շուտ՝ եղծանելու եսամոլական կիրքը, մարմաջը. աստվածակերպ ու աստվածաստեղծ բնության հմայքների հավերժության գաղափարը խորթ է նրանց էությանը. մի պատառ խորոված հայրենիքի, ազգի, հասարակական շահագրգռությունների հետ չեն փոխի,- այս է երկի գաղափարական հենքը:

Առկա է հոգեբանական լուծումը. արվեստասեր, անչար ու անշառ մարդը ձեռք է բարձրացնում իր նմանի վրա: Համոզիչ է Արամի այդ քայլը, որ հեղինակը հմտորեն նախապատրաստել է. Արամի դիմաց ոչ թե մարդ է, այլ մարդակերպ ճիվաղ, թուրք: Այս գիտակցությունն

է նրան զորավիգ լինում վճռական պահին, խիղճը լռեցնում: Կա նաեւ ինքնապաշտպանության բնազդը, որ տրված է ամեն շնչավոր էակի՝ մժեղից մինչեւ մարդ: Վիպակի կենտրոնական դեմքը Արամն է: Տոհմածառը նրան ամուր կապել է ընտանեկան ավանդույթներին. 1915 թ. Եղեռն ապրած եւ հայրենիք կորցրած արեւմտահայի զավակ է, եղեռնից հետո առաջին սերունդը, որ շատ բան ժառանգեց, նաեւ՝երկրի կորստի կսկիծը: Այդ կորուսը նրա համար ոչ թե գրքերից քաղված զաղափար է, այլ շոշափելի իրողություն, քանզի օրորոցից անմիջաբար ականջալուր է եղել կոտորածների ու ծնողների անողոքմ ճակատագրի սրտաճմլիկ պատմություններին, ականատես եղել նրանց ցավի ու անհուն կարոտի տվայտանքներին, հասակ նետել ու ձեւավորել նրանց երկրաբույր մթնոլորտում: Սերը պապերի հայրենիքի հանդեպ թափանցել է հոգու բոլոր ծալքերը եւ դարձել նրա աշխարհաճանաչման որոշիչ տարրերից մեկը: Նրան տանջում է բազմազավակ ընտանիք ունենալու հոր պատվիրանը չկատարելու պարագան, Արեւմտյան Հայաստանի անորոշ ճակատագիրը, այն «շան բերանում» թողնելու հանգամանքը. դրանով, բնականաբար, նա ընդդիմանում է իշխող պետական մտայնությանը, որ հաշտվել էր ստեղծված պատմական անողոք անարդարության հետ:

Ս. Վարդանյանը պատկերում է նաեւ հերոսի ընկերային անձուկ կացությունը, որ հակասությունների մշտական աղբյուր է: Շրջապատում օրավուր արմատավորվող անարդարությունը, օրենքի ու խղճի հանապազօրյա ոտնահարումները, նյութական միջոցների անքրտինք կուտակումը անարժանների ձեռքին, ամենաթողությունը, հոգեւորի ընկրկումը նյութապաշտության ու նորահայտ զոռբաների առաջ խորհելու, տառապելու եւ երբեմն ըմբոստանալու առիթ են դառնում:

Արամի կերպարի հոգեբանական բացահայտումները երեւան են հանում նրա բնավորության ինքնատիպ կողմերը, որոնք իշխող հասարակական միջավայրին հարմարվելու հանգամանք չունեն: Նա շիտակ է, արդարամիտ եւ չի հանդուրժում ծուռն ու կեղծը՝ թեկուզ ընկերը լինի կամ եղբայրը. այստեղից էլ այն անհարմար, երբեմն նույնիսկ զավեշտական դրությունները, որի մեջ ընկնում է՝ բախվելով զորշ իրականությանը: Ի բնե գեղագետ լինելով եւ քուրմի նման պաշտելով գեղեցկությունը՝ ամեն անգամ իրեն նվաստացած է զգում այն կրողի առաջ: Ինքնախարազանման մտրակը անողոք շաչում է՝ միայն սպիացած հետքեր թողնելով նրա վիրավոր ու լլկված հոգում: Միակ սփոփանքը վրձինն է ու երազանքը Անուշի պատկերի շուրջ:

Անբավարարվածության հոգեվիճակը վերածնվում է իսկական մղձավանջի, երբ հայտնվում է հարբած վարորդը եւ իր բռնությամբ նրա հովվերգական ասպնջարանը վերածում դժոխքի: Հակասություններից բզկտված Արամի մեջ հանձին վարորդի հստակվում, որոշակիանում, մարմին է առնում կյանքը ապականող, չարակոծ անող ուժը, եւ նա համոզվում է, որ «նրան հաղթելով հաղթահարած կլինի մնացած բոլոր ուժերին, որ գործում են հակառակ իրեն»: Հարբածը ներկայանում է նրան որպես բիրտ դաժանության մարմնացում: Վիպակի վերջում Արամի ձեռքը չի դողում հարվածը նպատակին հասցնելու: Սա է չարի եւ այլանդակի տրամաբանական վախճանը՝ որքան էլ դիմացինը թույլ, գթառատ ու ներողամիտ լինի:

Արամին մենք տեսնում ենք նաեւ արարման պահերին, ուր ընդգծված է նրա ոգեղեն

նախահիմքը, այստեղ հաճախ հեղինակն ու կերպարը նույնանում են: Ս. Վարդանյանի խոսքը դառնում է հորդահոս ու իմաստալից, նրբագեղ, սահուն ու արտահայտիչ: Թվում է, թե միտքը կրկնվում է, բայց այդ կրկնությունը կշռույթի, չափի զգացողություն բերելուց բացի, քայլ-քայլ եւ շերտ-շերտ հարստացնում է բովանդակությունը:

Վիպակում քիչ չեն հայրենի բնաշխարհին, հատկապես Սեւանա լճի անկրկնելի բնապատկերներին, գործող կերպարներին վերաբերող դիպուկ ու նրբին բնութագրումները:

Սասուն Վարդանյանի անցումը պատմավիպասանությանը բոլորովին էլ անակնկալ չէր: Հակումը դեպի Հայոց պատմությունը եւ հայ ժողովրդի անցած ուղու իմաստավորման ձգտումը երեւում են շատ էջերում:

Վեպը գրվել է 70-ական թվականներին, պատկերվող իրադարձությունների անմիջական տպավորության տակ: Հեղինակը երկու-երեք տարի աշխատել է Արփա-Սեւան կառույցում: Լինելով անձնական դիտարկումների ու ապրումների արգասիք՝ այն պարունակում է կենսական ճշմարտության արտացոլման բավական մեծ լիցք:

Վեպի բուն գործողությունները ծավալվում են Արփա-Սեւան ջրատարի շինարարությունում: Հեղինակը զուգահեռաբար ընթերցողին տեղափոխում է Վան-Տոսպ մայրաքաղաքում երեք հազար տարի առաջ Մենուա արքայի կողմից կառուցվող ջրանցքի պատմական իրադարձությունների ոլորտը: Այս ֆաբուլան շահեկանորեն հիշեցնում է հայ դասական պատմավեպի ավանդները: Եթե այստեղ արքայի կամքն է իշխող-որոշողը, եւ ամեն ինչ կատարվում է նրա հրամանին համապատասխան ու բարեհաջող, բախումը, հակամարտությունը միայն արտաքին թշնամու՝ Ասորեստանի հետ է, ապա Արփա-Սեւանը, չնայած պետական կառույց լինելուն, հակասությունների, մարդկային տարամերժ հարաբերությունների մի ամբողջ կծիկ է, որի բացահայտումը եւ հաղթահարումը տեղի է ունենում անօրինակ մաքառումներով, վեհի, վսեմ նպատակների եւ գռեհիկ նյութապաշտության, հետամնացության միջեւ անգիջում պայքարով: Շինարարների չափազանց դժվարին աշխատանքը, գորշ ու տխուր առօրյան, ստոր կրքերը դառն իրականության հայտանիշներն են: Անձնվեր, բանիմաց աշխատողների կողքին անբաններ ու բախտախնդիրներ, որոնք, հակառակ առաջինների, չունեն մեծ կառույցի նշանակության մատնաչափ գիտակցությունն իսկ, բացի անձնական շահից: Երկու դեպքում էլ, սակայն, հեղինակը կարեւորել է այդ հսկա կառույցների կենսական անհրաժեշտությունը Հայաստան աշխարհի համար:

Հայ մարդու անպարագիծ տվայտանքով է նա դիտում օրավուր ապականվող ու ծյուրվող գեղեցկուհի լճի կործանումը: Եւ դա է գլխավոր հերոսին՝ վտիտ, անփորձ, անպաշտպան պատանյակին բերել այստեղ՝ իր անզոր թեւերով գոնե մի քանի քար դնելու Սեւանի փրկության վեմին: Բնականաբար նա պիտի բախվեր դաժան միջավայրին: Բայց հավատը իր առաքելության հանդեպ զորավոր հիմք է դառնում՝ հաղթահարելու ոչ միայն անսովոր շրջապատի խոչընդոտները, անհրեւակայելի դժվարությունները, այլեւ ինքն իրեն, իր մարդկայնորեն ընդունելի թուլությունները, դառնալու իր գործի հմուտ գիտակ ու կազմակերպիչ, հեղինակություն: Սեւանը փրկելու մղում-նպատակ-երազանքի ահագնության առջեւ նսեմանում են բոլոր մյուս ապրումները, շահերը: Գլխավոր հերոսի անձնական վիշտը, չբավարարված սիրտ տվայտանքները առժամանակ փոշիանում են հասարակական գործի, բուն նպատակի իրականացման ճանապարհին՝ չնայած երբեմն-երբեմն զգացվում են հուժկու

թափով: Այս վեհ առաքելությունը դառնում է չափանիշ՝ գործող անձանց վարքը, աշխատանքը, հարաբերությունները, նիստուկացը, հայացքները գնահատելու, արժեւորելու:

Վեպի հիմնական կերպարները երիտասարդ մարդիկ են՝ նոր-նոր կյանք մտած, սակայն յուրաքանչյուրն իր մտածելակերպը, հակումները, ընկալումները, ձեւավորվող կերտվածքն ու կեցվածքը ունի: Կան ավանդական բարք ու վարքով ապրող, իրենց գործին հմուտ ու նվիրված բանվորներ, վարպետներ, ծառայողներ, որոնք կրում են հեղինակի իդեալները: Սրանց կողքին՝ գորշության մի ամբողջ զանգված ամենապարբեր սանդղակների վրա կանգնած, վճիռներ արձակողներից մինչեւ ամենասեւ աշխատանք կատարողներ, որոնք կամա թե ակամա փորձում են ի չիք դարձնել առաջընթացի ամեն մի ճիգ:

Այս հակամարտությունների կրողը Գարեգինն է՝ վեպի կենտրոնական դեմքը, որի անունից էլ ընթանում է պատումը: Նա գյուղական պարզ, ազնիվ, բարի ու բոլորանվեր անձնավորություն է՝ կյանքի մասին իր ավանդական պատկերացումներով, բարոյական ըմբռնումներով: Ուսման համար քաղաք գալով՝ ընկնում է նոր միջավայր, նոր ընկերներ ձեռք բերում ու նոր սեր: Ու գլխովին տրվում է այդ սիրուն՝ փոխադարձաբար համակրանքի եւ ուշադրության արժանանալով: Բայց շրջապատի անբարյացակամությունը, լիովին չհասկացվելու տագնապները, ընկերության սուրբ պարտականությունը չոտնահարելու սեւեռուն միտք-զգացումը երկփեղկում, անվճռական են դարձնում նրան, մղում զոհողության: Ու նա առժամանակ թողնում է սիրած աղջկան, քաղաքը՝ նվիրվելու մեկ այլ, իրեն ոչ պակաս մտատանջող առաքելության. մեկնում Արփա-Սեւան ջրատարի շինարարություն: Սակայն կյանքը ամեն տեղ նույնն է՝ բարդ, հակասական, կնճռոտ, տառապալից. տեղդ փոխեցիր, ինքդ էլ հո չփոխվեցիր, քեզանից ո՞ւր գնաս: Ու հոգու նոր բզկտումներ, միջավայրին ու աշխատանքի ծանրությանը հարմարվելու անօրինակ ջանքեր, որ բարեբախտաբար հաղթահարվում են աշխատանքով, աշխատանքի մարդկանց բարյացկամությամբ ու ամենից առաջ՝ սեփական անկոտրում կամքով ու հավատով առ նվիրական նպատակը:

Կյանքում քիչ չեն բարի մարդիկ, որոնք լույս ու ջերմություն են հաղորդում շրջապատին, ապրելը դարձնում տանելի ու հաճելի՝ չնայած բազում դժվարություններին: Ինչքան էլ անտանելի լինեն պայմանները, մարդը չպետք է կորցնի աստվածակերպ դեմքն ու դիմագիծը, ապրի ու գործի իբրեւ մարդ-արարած, այնպես որ այս աշխարհին հրաժեշտ տալուց հետո մնացողները հնարավորություն ունենան մի քանի անկեղծ խոսք ասելու նրա աճյունի առաջ, ինչպես փլուզումից զոհված ընկերոջ դամբանին: Այսպես են խորհում ու գործում Գարեգինը, նրա ընկերները:

Յուրաքանչյուրն իր անհատական-անձնական ճշմարտություն-երջանկությունը որոնելով՝ միաժամանակ այն չի պատկերացնում ազգային-հասարակական շահախնդրությունից դուրս. անհատականը փորձում է չափակշռել սեփական ժողովրդի պատմական ու ներկա հիմնախնդիրների լույսով՝ որոշել-հաստատելու համար իր գոյության իմաստը, իր տեղը հասարակական-ազգային առաջընթացում:

«Արամ աշխարհակալ» երկհատորանոց պատմավեպը (1997-1998 թթ.) բոլորովին նոր որակ էր գրողի ստեղծագործության մեջ: Վեպի բուն նյութը նախաքրիստոնեական Հայաստանի (Ք. ծ. ա. Թ դար) պատմական-քաղաքական, ռազմական, հասարակական-մշակութային կյանքի կարեւոր, էական անցուդարձերն են: Հայ ժողովրդի հինգհազարամյա

գոյության այդ վճռորոշ ժամանակահատվածի կենտրոնում Հայկյան զարմի արժանավոր շառավիղ Արամ արքան է:

Հաղթահարելով չորեքկուսի թշնամի պետությունների ու ցեղերի նվաճողական ոտնձգությունները եւ ներքին բազում խոչընդոտները՝ նա կարողանում է ստեղծել միասնական անկախ պետություն, ավելին՝ իր թագավորությանը միացնել հայրենիքից օտարված, նաեւ թշնամուն պատկանող տարածքներ եւ հիմք դնել Արարատյան մեծ թագավորությանը՝ հռչակվելով որպես աշխարհակալ կայսր:

Տարաբախտաբար, տասնամյակներ շարունակ եւ վերջին յոթանասուն տարում մեր պատմագրության մեջ անցյալի աղբյուրների, պատմիչների, այդ թվում եւ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շատ էջերի հանդեպ թերահավատ վերաբերմունք է եղել՝ նույնիսկ բուն մասնագետների կողմից: Օտար հետազոտողների նկատմամբ կույր հավատը շատ անգամ մթագնել է ճշմարտության լույսը, եւ հինգերորդ դարում պարզ հայերենով գրված Պատմահոր խորիմաստ տողերը անվստահությամբ ու կասկածանքով են ընդունվել: Արդյունքը եղել է այն, որ պատմական հավաստի շատ իրողություններ դիտվել են իբրեւ առասպել, բանահյուսության արգասիք եւ Արարատյան թագավորությունը՝ Վան-Տոսպ մայրաքաղաքով, երեքհարյուրամյա գոյությամբ, հռչակվել է օտարածին պետություն: Թե Հայոց աշխարհում ինչպես եւ որտեղից հանկարծ հայտնվեց, հզորացավ ու անհետ կորավ այդ անհայր, անտոհմ, առեղծվածային պետական կառուցվածքը, մնում է հանելուկ: Այս հանելուկը ավելի է խորանում ու խորհրդավոր դառնում, երբ նրանից անմիջապես հետո անսպասելիորեն ասպարեզ է գալիս Երվանդունիների հայոց հարստությունը, եւ իբր միայն այդ ժամանակ վերջնականապես ձեւավորվում է հայ ազգը՝ որպես ամբողջություն, ու դրվում է հայոց ինքնուրույն թագավորության սկիզբը:

Ահա, Սասուն Վարդանյանը, իբրեւ գրող, փորձել է անդրադառնալ Արամի «առասպելին» եւ ողջախոհ պատմաբանի խորաթափանցությամբ ու գեղագետի ներքնատեսությամբ հետամուտ եղել պատմական-գեղարվեստական հնարավոր ճշմարտությանը՝ մեր աշխարհում այն ժամանակ կատարվող դեպքերի մասին:

Հեղինակը տարիներ շարունակ հանգամանորեն ուսումնասիրել է այդ ժամանակահատվածին վերաբերող ոչ այնքան հարուստ նյութը՝ սկզբնաղբյուրներ, վիմական արձանագրություններ, հիշատակություններ, պատմական տվյալներ, նաեւ դրանց բազմաբդեպ մեկնությունները եւ այդ հիման վրա ստեղծել մի ամբողջական գեղարվեստական երկ, որ բազմակողմանի ու հարազատորեն է ներկայացնում ժամանակի կենդանի, տրոփուն ընթացքը: Այստեղ, անշուշտ, անգնահատելի են հեղինակի ստեղծագործական վառ երեւակայությունը, նաեւ՝ գրողական վարպետությունը եւ, ընդհանրապես, մեր բազմադարյա պատմության քաջագիտակությունը: Վավերական փաստերը, երեւույթները հմտորեն բեկվել են ստեղծագործական երեւակայության քուրայում եւ վերածվել շոշափելի, տպավորիչ ու հավաստի պատկերների: Զգացվում է, անշուշտ, հայ դասական պատմավիմագրության (Ղաֆֆի, Մուրացան, Ծերենց, Դեմիրճյան, Դաշտենց) ավանդույթների եւ համաշխարհային գրականության դասական նմուշների բարերար ազդեցությունը՝ առանց դույզն-ինչ վերածվելու հետեւողության: Այնքան ինքնատիպ ստեղծագործություն է՝ իր բովանդակությամբ, ընդգրկումով, կառուցվածքով, կերպարների բազմազանությամբ եւ յուրատիպությամբ,

դիպաշարերի հաջորդականությամբ ու հմուտ միահյուսմամբ, հեղինակային միջամտություններով եւ բնութագրումներով, լեզվառճական առանձնահատկություններով, որ որեւէ անմիջական ազդեցության մասին խոսք լինել չի կարող: «Արամ աշխարհակալը» մերօրյա պատմավիպասանության նկրտումներին շատ թե քիչ համահունչ լինելով՝ հայ պատմավեպի ավանդական շղթայից դուրս չէ, նրա մեկ ուրույն օղակն է:

Վեպը հարուստ բովանդակություն ունի. կան հիմնարար գաղափարներ, պատմական միջավայր, լիարժեք կերպարներ, հոգեբանական նուրբ դիտարկումներ, ռոմանտիկ-առասպելական եւ հույժ իրապաշտական պատկերներ, որոնք չեն հակասում, այլ շահեկանորեն լրացնում են իրար: Մի կողմից ներկայացվում-բացահայտվում է պատմական իրողություն-իրականության էությունը, մյուս կողմից՝ արծարծվում են հիմնահարցեր՝ ուղղակիորեն արձագանքող մեր օրերի հասարակական-քաղաքական խմորումներին, պետական շինարարության խնդիրներին: Տիրապետողը հեղինակի հայաշունչ, առողջ հայացքն է, որ ընդգրկում է հայոց պատմությունը՝ սկզբից մինչեւ 1997 թվականը, իբրեւ մեկ ամբողջություն՝ առանց անցյալը ներկային հակադրելու:

Ս. Վարդանյանը կարողացել է շունչ ու արյուն տալ այնքան թվաշատ, ամենատարբեր միջավայրեր ու շահեր ներկայացնող, դասերի ու խավերի պատկանող, իրար համակիր ու հակակիր գործող անձանց, մեծ մասամբ հաջողված կերպարներ, բնավորություններ ստեղծել, որոնք ապրում ու գործում են որոշակի միջավայրում՝ իրենց նախասիրություններով, մեծ ու փոքր, ակնհայտ ու թաքուն կրքերով, լեզվամտածողության ատաղձով: Հապա պատերազմական գործողությունների, ռազմական երթերի, զանգվածային տեսարանների, պետական-դիվանագիտական փոխհարաբերությունների, առօրյա կենցաղային դրվագների, անձնական, սիրային հարաբերությունների նկարագրությունները, կյանքի ու կենցաղի, հագուստների, սովորությունների մանրամասները, մարդկանց զարմանալիորեն տեղին ու դիպուկ անվանումների, տիտղոսների ընտրությունը, մշակութային, գիտական, կրթական գործընթացների, կրոնական պատկերացումների, աղանդների ու հավատալիքների բնութագրումները եւ խորագնա վերլուծությունները, այդ ամենը բաբախուն, լիարժեք կյանքով են լցնում-տոգորում վեպը:

Մեր աչքի առաջ բացվում է մի նոր, շատերիս համար բոլորովին անհայտ մի աշխարհ՝ մինչ այդ անիմանալի ու առեղծվածային, ավելի ճիշտ՝ մի աշխարհ, որի մասին մենք քիչ ենք մտածել կամ երազել, բայց որի պակասը արյան կանչով միշտ էլ զգացել ենք, ինչպես ամեն ողջախոհ մարդ, որ «տառապում է» իր պապերի, ապուպապերի անհայտության գիտակցությունից: Չնայած պատմահոր հայտնի խոսքերին՝ թեեւ մենք փոքր ածու ենք, բայց մեր աշխարհում եւս կատարվել են հիշատակության արժանի գործեր, դեռ շատ են պատմագիտական կամ գեղարվեստական իմաստավորման ենթակա սպիտակ էջերը:

Արամի եւ նրա զինակիցների սխրագործություն-մեծագործությունը ավելի քան արժանի է ճանաչման, փառաբանման եւ ընդօրինակման. վսեմ, անբաղդատելի հոգեւոր սնունդ այսօրվա ու վաղվա սերունդների համար, ինչպես եղան Մամիկոնյան Վարդանն ու Մուշեղը, Գեւորգ իշխանը, Աշոտ Երկաթը, Դավիթ Բեկը, առասպելական ֆիդայիները՝ կամոքն պատմական առաքելության եւ իրենց քանքարավոր հեղինակների: Եւ դա՝ կենդանի խոս-

քի, գեղարվեստական պատկերի, հույզի ու մտքի ձույլ ներդաշնակություն կազմող հրաշք արվեստի շնորհիվ:

Այսօր ուղղակի անհնար է պատկերացնել մեր կյանքը առանց այդ երկերի, դժվար է չափակշռել, գերագնահատել դրանց նշանակությունը վերջին հարյուրամյակում մի քանի սերունդների հայրենասիրական զանգվածային ոգորումների, ազգային հավաքական մտածողության ձևավորման գործում: Ոչ մի գիտական-պատմական ուսումնասիրություն՝ ամենաբարձր մակարդակով ներկայացված, չէր կարող նման խոր հետք թողնել մարդկանց հոգիներում:

Կարծում եմ, որ շնորհափայլ Արամ արքայի կերպարը եւ վեպն ամբողջությամբ կծառայեն իրենց բուն նպատակին, որ հեղինակի նպատակ-երազանքն է, կյանքի գործը, բոլոր ժամանակներում մեր ազնիվ մտավորականների, ազգի ցավերով ապրող պետական գործիչների, անձնազոհ զինվորների ու զորավարների, հոգեւոր առաջնորդների, հայրենի երկրի ազատության, անկախության, միասնականության ու հզորացման համար ընկած նահատակների սուրբ գործը:

Հաջորդ խոշոր երկը «Արքայից Արքա» երկհատորանոց պատմավեպն է (2004 թ., 2008 թ.), ուր հեղինակը արծարծում է Հայոց աշխարհում 5000 տարվա վաղեմություն ունեցող պատմական իրադարձությունները՝ կապված Հայկ նահապետի անվան ու գործունեության հետ: Ավանդաբար առասպել համարվող պատմությունը այստեղ դարձել է կենդանի իրողություն, մարմնավորվել բազում կերպարների մեջ, վերածվել միտք ու գաղափարի: Անպարփակ երեւակայությամբ, բայց գիտական հարուստ տվյալների վրա հյուսված դիպաշարերում կերպավորվում են Հայկյան տոհմի դյուցազունները եւ, առաջին հերթին, Արքայից Արքա Հայկը, որ առաջնորդվում է հետեւյալ գաղափարներով. պետական շինարարության հիմքում պետք է դրված լինեն ուժը, արդարությունն ու բարությունը՝ չբացառելով պետական շինարարությանը անհրաժեշտ մյուս բոլոր գործոնները: «Գիրքը,-գրում է հեղինակը,-բացի պատմական անցուդարձերը նորովի արծարծելուց, վաղագույն անցյալը վերականգնելուց, մեր անհուն կորուստներն ու ձեռքբերումները իմաստավորելու ու գուցե նաեւ հավասարակշռելու նոր հայացք է՝ ներկայից ձգված դեպի խոր անցյալ»:

Մեկ նկատառում եւս. Վարդանյանը երկրորդ հատորի սկզբում անհրաժեշտ է համարել հիշեցնել, որ իր երկու պատմավեպերում ինքը անհրաժեշտորեն պատկերել, ամբողջացրել է նաեւ հայկական քրմության դիմապատկերը, որ ցարդ ուշադրությունից դուրս է մնացել կամ ներկայացվել է աղավաղված: Մինչդեռ քրմությունը նախաքրիստոնեական շրջանում մտավոր գործունեության ու մշակույթի կրողն է եղել եւ նշանակալի դեր խաղացել հայ ժողովրդի հոգեւոր կյանքի ամենափարբեր ոլորտներում: Այս առումով էլ նա ստեղծել է քուրմերի, քրմապետների հաջող կերպարներ՝ թե՛ դրական, թե՛ բացասական: Պատմավեպը շատ հարուստ է ձեւով ու բովանդակությամբ:

Ամփոփելով՝ ուզում եմ ամբողջությամբ մեջ բերել հայտնի գրականագետ, ՀՀ ԳԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի՝ Ս. Վարդանյանի «Արամ Աշխարհակալ» վեպին տված գնահատականը: Միակ պրոֆեսիոնալ արժեւորումը առ այսօր: Այս գնահատականը միանգամայն բավարար է, որ Ս. Վարդանյանի անվան ու ստեղծագործության վրայից իսպառ վերանա չարաբաստիկ մոգարգելքը գրական շրջանակներում:

«Համոզված եմ, որ այս գիրքը ոչ ոք չի կարդացել եւ գուցե նույնիսկ այդպես էլ կմնա չկարդացված, ինչպես չկարդացված է մնում արդի մեր գրականությունը: Եւ ինչո՞ւ կարդալ. հանուն ինչի՞, այն էլ երկու սրվար հատորներ՝ շուրջ հազար հինգ հարյուր խտատիպ էջերով: Առավել եւս մի անհայտ անուն եւ գրական շրջանակներին անհաղորդ անձ: Իսկ որ Սասուն Վարդանյանի «Արամ Աշխարհակալ» վեպը արժանի է ուշադրության, հավաստում եմ առանց կանխակալ միտումի եւ ի հեճուկս կասկածամիտների: Համենայն դեպս մի բան արժե հետազոտական այն բացառիկ փորձը եւ պատմության այն խոր իմացությունը, որ հեղինակն ի հայտ է բերում վիպական սյուժեի լայնատարած բնագրում՝ ստեղծելով գիտության ու գրականության մի համաձույլ ավանդապատում: Պետք չէ համեմատությունը. հեղինակն ստեղծել է պատմությունը վիպելու իր ուրույն եղանակը՝ գուցե հենց դա էլ հետաքրքրական է:

Վեպի ժամանակը մեր թվարկությունից առաջ 9-րդ դարն է՝ Արամյան թագավորական հարստության կայացման դարաշրջանը: Գաղափարը էթնիկական ինքնության ձգտումն է՝ պատմության համաշխարհային տեղաշարժերի բարդ ու ճակատագրական անցուդարձերում, ֆիզիկական ու հոգեւոր ինքնության մաքառումը՝ հայկական անկախ պետականության եւ, այսպես կոչված, «ազգային » քրմության հիմքի վրա: Եւ այսպես շարժման մեջ է դրվում ամբողջ պատմությունը՝ կենցաղ, բարքեր, ծիսակատարություններ, պետական ու ներպալատական ինտրիգներ, կախարդներ, գուշակներ, մարդկային մտքի գիտական ու իմաստասիրական վաղ արթնացումներ: Գործում են աստվածներ ու մարդիկ՝ կրքերի, զգացմունքների, սիրո եւ ընծայաբերման հեթանոսական ազատությամբ: Վեպում ճանաչման հաճույք են պատճառում առասպելապատմական բնանկարի (պատմության պեյզաժ) պատկերները, ժամանակը, բնորոշող անունները, տեղանունները, էթիկետը, պետական ու ռազմական հասկացությունները, աստիճանակարգերը եւ այլն:

Սասուն Վարդանյանի «Արամ Աշխարհակալ» վեպը բովանդակությամբ պատմական է, գաղափարով՝ արդիական եւ արժանի է գնահատության» («Հայաստանի Հանրապետություն», 1999, 26 հունիս):

Մենք լիովին ընդունում ենք մեծավաստակ գրականագետի այս մոտեցումը: